ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2023թ. N 12-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱԲԱԺՆԻ ՉԱՓԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թ. դեկտեմբերի 31-ին ընդունված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 867 որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի պահանջներին համապատասխան, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 50-րդ կետերը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991 թվականի ապրիլի 10-ի N 7 որոշման քաղվածքը և հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Անտոն Արտուշի Անտոնյանի դիմումը (մտից N 74, 18.01.2023 թ.) ու գույքի առաջին պետական գրանցման հանգամանքը՝ ***որոշում եմ***՝

1. Ճանաչել Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչներ Անտոն Արտուշի Անտոնյանի, Գայանե Ռոլանդի Գրիգորյանի, Լուսինե Անտոնի Անտոնյանի և Լևոն Անտոնի Անտոնյանի սեփականության իրավունքը Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 1-ին փողոցի վրա գտնվող բնակելի տան և հարակից օժանդակ շինությունների նկատմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցված են ընտանիքին սեփականաշնորհված 0,15 հա մակերեսով 0038-0006 կադաստրային ծածկագրով հողամասի վրա (փաստացի չափագրումով՝ 0,19664 հա). ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիրը՝ 2022MP2NLH:

2. Գնդեվազ գյուղի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի որոշմամբ Անտոն Արտուշի Անտոնյանի ընտանիքին սեփականաշնորհված 0,15 հա տնամերձ հողամասի՝ հողաբաժնի չափից մինչև 20 % ավել օգտագործվող 300 քմ մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականության իրավունքը, իսկ ավել չափագրված՝ փաստացի օգտագործվող 166,4 քմ մակերեսով հողամասը ուղղակի

վաճառքի կարգով օտարել Անտոն Արտուշի Անտոնյանին՝ հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով՝ 39540 (երեսունիննը հազար հինգ հարյուր քառասուն) դրամով:

3. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի տունը և օժանդակ շինությունները, ընդհանուր մակերեսը՝ 380,5 քմ, կառուցվել են 1990-1991 թվականներին, դրանք կառուցված չեն և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, շինության պահպանումը չի հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

4. Սույն որոշման 2-րդ կետում նշված ավել օգտագործվող 466,4 քմ ընդհանուր մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չի ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հողօգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

5. Սույն որոշման առաջին կետում նշված անշարժ գույքին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնքի, գյուղ Գնդեվազ, 1-ին փողոց, տուն N 10:

6. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն որոշման 1-ին կետում նշված անձանց որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2023 թ. հունվարի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2023թ. N 13-Ա

ՍԱՐԳԻՍ ՎԻՏՈՒՇԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Սարգիս Վիտուշի Հակոբջանյանի դիմումը (մտից՝ N 50, 16.01.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի 19-րդ շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Շահումյան-19 շենքի 3-րդ հարկի բնակարանի (նախկինում՝ տարածք, գործառնական նշանակությունը փոխվել է Ջերմուկ համայնքի ղեկավարի 12 օգոստոսի 2022 թվականի N 227-Ա որոշմամբ), ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շահումյան փողոց 19-րդ շենք N 45:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունվարի 2023թ. N 14-Ա

ՆՈՒՆՈՒՖԱՐ ՎԱՉԱԳԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Նունուֆար Վաչագանի Կարապետյանի դիմումը (մտից՝ N 101, 23.01.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 26/2 շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ-26^{բ} շենքի թիվ 8 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս 26/2–րդ շենք N 8:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2023թ. N 15-Ա

ՎԱՉԻԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ՝ ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով հանգուցյալ Վաչիկ Մովսիսյանի իրավահաջորդ Վահե Վաչիկի Մովսիսյանի դիմումը (մտից՝ N 109, 24.01.2023 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 5-րդ շենքում գտնվող բնակարանին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Ձախափնյակ-5 շենքի թիվ 39 բնակարան, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մ. Ստեփանյան փողոց 5-րդ շենք N 39:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 30
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2023թ. N 16-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 274-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, հիմք ընդունելով Ջերմուկ համայնքի ավագանու ս/թ հունվարի 31-ի N 6-Ա որոշումը՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 2-ի «ՀՀ Պաշտպանության նախարարությանը անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» N 274-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ որոշման 1-ին կետի «2027» թիվը փոխարինել «2042» թվով,

բ/ որոշման 2-րդ կետում «ինչպես նաև» բառերից առաջ դրված «,» կետադրական նշանը փոխարինել «՝» կետադրական նշանով և հանել «ինչպես նաև՝ գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարում է» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2023թ. N 17-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հաշվի առնելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Հ. Ալոյանի դիմումները (մտից՝ 2023 թվականի հունվարի 30-ի N 148)՝ **որոշում եմ՝**

1. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հուլիսի 7-ին տրված՝ NN 43, 44, 45 և 46 շինարարության թույլտվությունների գործողության ժամկետները երկարաձգել մեկ տարի ութ ամիս ժամկետով:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 175 000 (հարյուր յոթանասունհինգ հազար) դրամ՝ տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2023թ. N 18-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ««ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ՝ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 31.01.2023 թ. N 8-Ա որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի Ջերմուկ համայնքի ««Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» N 87-Ա որոշման 1-ին կետը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի՝ ի դեմս համայնքի ղեկավարի և Ջերմուկ համայնքի ««Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի՝ ի դեմս տնօրենի (այսուհետ՝ Փոխառու), միջև 2019 թվականի մարտի 4-ին կնքված (վավերացված է 04.03.2019 թ. «Վայոց ձոր մարզ» նոտարական տարածքի (Ջերմուկ) նոտար Ս. Վ. Ստեփանյանի կողմից)՝

- *պայմանագրի 1.2 կետում '*

ա/ «ժամանակավոր» բառը փոխարինել «անորոշ ժամկետով» բառերով,

բ/ «1523,43 /մեկ հազար հինգ հարյուր քսաներեք ամբողջ քառասուներեք հարյուրերորդական/» թիվը փոխարինել «1529/ մեկ հազար հինգ հարյուր քսանինը/» թվով

- *պայմանագրի 1.3 կետում՝*

ա/«29.05.2018» թվերը փոխարինել «18.11.2022» թվերով

բ/ «29052018-10-0009» թվերը փոխարինել «18112022-10-0006» թվերով

2. Փոխառուի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2023թ. N 19-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ««ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ՝ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑԻ N 3/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ, ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 31.01.2023 թ. N 8-Ա որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի Ջերմուկ համայնքի ««Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» N 87-Ա որոշման 1-ին կետը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի՝ ի դեմս համայնքի ղեկավարի և Ջերմուկ համայնքի ««Ջատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի՝ ի դեմս տնօրենի (այսուհետ՝ Փոխառու), միջև 2019 թվականի մարտի 4-ին կնքված (վավերացված է 04.03.2019 թ. «Վայոց ձոր մարզ» նոտարական տարածքի (Ջերմուկ) նոտար Ս. Վ. Ստեփանյանի կողմից գրանցամատյանում N 47–ով) գույքի՝ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 8-րդ փողոցի N 3/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինության, անհատույց օգտագործման պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

- պայմանագրի 1.2 կետում ՝

ա/ «ժամանակավոր» բառը փոխարինել «անորոշ ժամկետով» բառերով,

բ/ «341,25 /երեք հարյուր քառասունմեկ ամբողջ քսանհինգ հարյուրերորդական/» թիվը փոխարինել «352,5/ երեք հարյուր հիսուներկու ամբողջ հինգ տասնորդական/» թվով

- պայմանագրի 1.3 կետում՝

ա/«06.02.2019» թվերը փոխարինել «28.12.2022» թվերով

բ/ «06022019-100008» թվերը փոխարինել «28122022-10-0018» թվերով

2. Փոխառուի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2023թ. N 20-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ «ԳՆԴԵՎԱԶ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին կետի, հիմք ընդունելով համայնքի ավագանու 31.01.2023 թ. N 8-Ա որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի Ջերմուկ համայնքի ««Զատիկ» մանկապարտեզ» ՆՈՒՀ» և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ներին անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին» N 87-Ա որոշման 1-ին կետը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի՝ ի դեմս համայնքի ղեկավարի և «Գնդեվազ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ ի դեմս տնօրենի (այսուհետ՝ Փոխառու), միջև 2019 թվականի հունիսի 23-ին կնքված (վավերացված է 23.06.2019 թ. «Վայոց ձոր մարզ» նոտարական տարածքի (Ջերմուկ) նոտար Ս. Վ. Ստեփանյանի կողմից գրանցամատյանում N 190–ով) գույքի՝ Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 8-րդ փողոցի 1-ին փակուղու N 3 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինության, անհատույց օգտագործման պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները՝

- պայմանագրի 1.2 կետում ՝

ա/ «ժամանակավոր» բառը փոխարինել «անորոշ ժամկետով» բառերով,

բ/ «468,45 /չորս հարյուր վաթսունութ ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական/» թիվը փոխարինել «538,6/ հինգ հարյուր երեսունութ ամբողջ վեց տասնորդական/» թվով

գ/ «0,09333/զրո ամբողջ զրո ինը հազար երեք հարյուր երեսուներեք հարյուրհազարերորդական/» թիվը փոխարինել «0,101/ զրո ամբողջ հարյուր մեկ հազարերորդական/» թվով:

- պայմանագրի 1.3 կետում՝

ա/«04.04.2011» թվերը փոխարինել «16.01.2023» թվերով

բ/ «2714477» թվերը փոխարինել «16012023-10-0025» թվերով

2. Փոխառուի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. հունվարի 31
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2023թ. N 21-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և դեկտեմբերի 23-ի N 100-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մարինե Հովհաննիսյանի հայտը (մտից՝ N 156, 2023 թվականի հունվարի 31)՝ ***որոշում եմ՝***

1. Մարինե Հովհաննիսյանին 2023 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 19-րդ շենքի մոտակա տարածքում գտնվող խանութում (ոչ հիմնական շինություն) ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 1):

2. Մարինե Հովհաննիսյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 7 500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Հովհաննիսյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 30-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԵԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2023 թ. փետրվարի 1
Ջերմուկ